ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5299-Ա « 30 » հոկտեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի Հ.457-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 26.07.2026թ. եզրակացությունը, ինչպես նաև քաղաքացի Նելլի Խալաթյանի 06.10.2022թ. հ.Դ-86701-22 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2010 թվականի փետրվարի 8-ի «Ղափանցյան փողոցի հ.5/19 բնակելի տան նկատմամբ Նելլի Էդվարդի Խալաթյանի գույքային իրավունքները վերականգնելու, 259.07քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.457-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրում, նախաբանում, 2-րդ կետում՝ «259.07» թիվը փոխարինել «235.29» թվով.

2) Որոշման նախաբանում և 1-ին կետում՝ «559.07» թիվը փոխարինել «535.29» թվով.

3) Որոշման 3-րդ կետում՝ «քաղաքապետի օգնականին» բառերը փոխարինել «քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ 